ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«29» «ապրիլի» 2022 թ. № 136-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 172-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասի 5-րդ կետով, 21-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի «Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 172-Լ հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված անտառային կոմիտեի կառուցվածքում կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները՝

1) անտառային կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող անտառների հաշվառման և կադաստրի վարման բաժինը վերակազմավորել անտառների հաշվառման և կադաստրի վարման վարչության.

2) ստեղծել անտառային կոմիտեի պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հսկողության վարչություն՝ որպես աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Հրամանի հավելվածի՝

1) 11-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«15) օրենքով սահմանված դեպքերում «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին եզրակացության տրամադրումը.»:

2) 25-րդ կետի 2-րդ ենթակետում «բաժին» բառը փոխարինել «վարչություն» բառով.

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻՆ
Մուտք N 04/693-22
«02» 05 2022

3) 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 9-րդ ենթակետով.
«9) պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հսկողության վարչություն»:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

4/29/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

« 29 » ապրիլի 2022թ.
ք. Երևան